

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մարտ 11

Թիւ 86 — ԺԳ

هائراکیداق غزنه سبى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար

50 Դր.

Գաւառաց համար

60 ,

Արասահման

15 Տր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեմքեր ու դպքեր

Ցաւերու լեզուն (Բմայք)

Անօգուտ մոռացում (Քերթուած)

Տես. եւ գործ. Մանկավարժութիւն

Իտալիոյ հասած (Վիպակ)

Ազգագրական (Ակնայ սովորութիւններ)

Ներգաղութութիւն

Քիչ մը խնդուք

Բ. Պ.

Թէոդոր

Ե. ԳՕԼԱՆ

Մ.

Ս. ԲԱՔԷ

Բ. Պ.

Ս.

40 փարա 40

ՀԱՆՐԱՓԻՏԱԿ կը ծախուի. 1. Գասըղիւղ, Արմեն ԷՖ. Զպուգնեանի Դեղարանք. — 2. Սամաքիա, Կայարանին մօտ, ծխավանառ Յարութիւն Աղա Էմօքհանեանի խանութք. — 3. Կամուրջի գլուխը, ջրավանառ Նեան աղա Օգուկեանի հով (նախկին ջրավանառ Պողոս աղայի խանութք). — 4. Զրավանառ Սեփան աղայի խանութք. — 5. Մարգարեան, Պալինց, Ալեքեան եւ Զարգարեան գրատոններ. — 6. Բոլոր յազրավանառներուն հով:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՓԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ ուղղակի Տեօրէնութեան դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե՝ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապքի հասցիս Թիւ 61

1900

ԿԱՐԵԽՈՐ

Անոնք որ կը փափաքին նպաստաւոր
եւ շահաւէտ պայմաններով հողագոր-
ծութիւն ընել պէտք է փութան իրենց
ամեն տեսակ մշակութեանց մէջ ար-
հեստական աղբերու կամ հանքային
պարարտեցուցիչներու գործածութիւ-
նը ի կիր առնուլ որ կենդանական աղ-
բէն աւելի խնայողական ըլլալով հան-
դերձ աւելի արդիւնաբեր են :

Առանց պարարտեցուցիչներու մշա-
կութիւն մը կը նմանի առանց իւղի
կանթեղի մը :

Ընդհանուր մթերանոց

Խ. ՆԱՇԻՏ

Քիւչիւք Պարնաթան խան Կ. Պոլիս .
Ուր ճրի կը տրուին ամէն ծանօ-
թութիւնք և տեղեկութիւնք :

ԻՆՉ Է

ԻՍԴԵՐԻՆ

ՈՐՈՂԵՐ ԵՆ ԻՐ ԴԱՐՄԱՆՆԵՐԸ

Ժողովուրդին համար գրուած

Թարգմ. Դրման երհնէ

Ն. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

ԳԻՆ 5 ՂԸԸ.

Դադիկեան էֆ. , որ անընդհատ կը
շարունակէ Գերմաներէնէ կարգ մը օգ-
տակար դրքերու թարգմանութիւնն ու
հրատարակութիւնը , որոց ամենքն ալ
ժողովուրդին օգտին համար գրուած են
ժողովրդական հեղինակներու կողմէ ,
այս անգամ իւր ընծայած է շատ պի-
տանի գիրք մը եւ միանգամայն շատ
ի դէպ մանաւանդ հիմա որ շլագրգու-
թիւնն իր ծայրագոյն աստիճանին հա-
սած է մեր մէջ . կը յանձնարարենք
այս պիտանի գիրքը մեր ընթերցողնե-
րուն , որք կարգաւով պիտի սովորին թէ
արդի յոռի դաստիարակութեան աղե-
տաբեր հետեւանքներէն մին է « Իսդէ-
րին » . Ա՛հ , որքան « Իսդէրիք » կիներ ,
օրիորդներ , երիտասարդներ ունինք
հիմա . Թող փութան գնել մէկմէկ հատ ,
որպէս զի գաղափար ունենան իրենց
հիւանդութեան , անոր պատճառներուն
և դժբանքներուն վրայ :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ

4. ԵՆՎՐՈՒԵԱՆ



Վ. Ի Ս Ս. Գ Ո Ւ Լ Ե Ա Ն

ՄԵՍՍԵՐՈՒՆԿ ՃՈՒ ՄԹԵՐԻ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւոր գին

Պաննէ զաբու , ճէլալ պէյ խանի սակ

Թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր պատ-
ուարժան ընթերցողներուն կը յանձնարա-
րենք սոյն վստահելի վաճառատունն , որ
երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք
մը գրաւած է , և ամէն տարի չի զլանար իր
թէլի նուէյը՝ ի նպաստ կարօտելոց :

Վստահաբար դիմեցէ՛ք և պիտի չզղ-
ջաք :—Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք :

ՀԱԶԱՐ ԵՒ ՄԵԿ ԾԱՂԻԿ

ՀՆՏԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Կ. Պոլիս , Զօրագմի խանի դէմ Քիւչիւք
Պարնաթան խան Թիւ 10

Ձեր հաճոյքի համար ընելիք մշա-
կութեանց մէջ եթէ յաւաստաբ և վրայ
տալ չէք ուզեր ձեր դրամն ու աշխա-
տութիւնը , դիմեցէ՛ք վերջիչեալ հնա-
վաճառանոցը ուր կը ծախուին երկրի
կլիմային յարմար ճամբորտապէս գե-
ղեցիկ ծաղիկներու եւ համեղ ու ար-
դիւնաշատ բանջարեղէններու հուն-
տեր , որոնց իսկութիւնն ու թար-
մութիւնն երաշխաւորեալ է :

Խիստ դիւրամասշտի գինը

Սոյն վաճառատան մէջ կը ծախուին
նաեւ ամէն տեսակ մշակութեանց հա-
մար մասնաւոր գուռ . քիմիական աղբեր :


ԿԱՐԵԽՈՐ ԱԶԴ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կրնայ
հայթայթել բոլոր վարժարաններու պէտք
ունեցած դասագիրքերը , եղած յանձնարա-
րութեանց ճիշդ համաձայն : Ամէնէն մեծ
գեղջը կուտայ , առանց ո եւ Է շահու ազն-
կալութեան : Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք .
— Միւս կանխիկ :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական և Բարձրագույն



ԽՍԲԱԳԻՐ - ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մարտ 11

Թիւ 86 — ԺԳ

ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ



Բ ԶԻՆ ողջամիտ մասը
էջմիածնայ շուրջն ան-
ցած դարձած բաներուն
ի տես, այսօր համոզ-
ուած է թէ Ազգին ու
եկեղեցւոյն վերին շահերը կը պա-
հանջեն բարձրացնել Կիլիկիոյ կաթողի-
կոսութեան լքուն դիրքը, ինչպէս արդի
Ընդհանրական Հայրապետը, ճշմարտա-
պէս իրադեկ, չեչտած էր իր Հայրապե-
տական պատգամով: Բայց Կիլիկիոյ Կա-
թողիկոսութեան դիրքը բարձրացնելը ը-
սելով, ոմանց կարծածին պէս, չենք
հասկնար ոտնձգութիւն մը պատրիար-
քական իրաւասութեան սահմաններուն
մէջ: Ս. Դ. ունի ձգութիւն երկուստեքեւս
պէտք չէ տեղի ունենայ, զի խուլ հա-

կառակութիւն յարուցանելէ զատ, ու-
րիշ արդիւնք չի կրնար ունենալ: Ոչ ա-
պաքէն տարիներէ ի վեր մշուած այդ-
պիսի պայքար մը մեծ վնաս պատճա-
ռած է Կիլիկիոյ ընդարձակ վիճակին,
կրօնական, բարոյական ու կրթական
երրեակ տեսակէտով: Ոչ ոք կրնայ ժըխ-
տել զայս, առանց չիկնելու:

Ամէնէն յուսի կաթողիկոսն անգամ,
ըսած է Էջմիածնայ արդի Հայրապետը,
կրնայ օգտակար ըլլալ Կիլիկիոյ Հայ Ժո-
ղովուրդին կրթական ու կրօնական զար-
գացման, եւ վեր բռնել Կաթողիկոսու-
թեան դիրքն ա՛յն տեսակէտով որով Ժո-
ղովուրդական արիւնն մը, որ ոչ եւս է,
երբեմն ձայն կը բարձրացնէր ուկը փառ-
տաբանէր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
պահպանումը իբրեւ կենսական պէտք
մը նոյն ինքն ընդհանրական Հայրապե-
տութեան դիրքին համար:

Երեսունեւհինգէն մինչեւ քառասուն
երկար տարիներ, գրեթէ ո եւ է ջանք
չէ եղած Կիլիկիոյ Հայ Ժողովուրդին
կրօնական ու կրթական մակարդակը
բարձրացնելու: Հռոմէականութիւնն ու
լուտերականութիւնն իրենց կրօնածա-
ւալական ձեռնարկներն անարդեւ յա-

ուսման տարած են ու կը տանին: Կիլիկիոյ գրեթէ ամէն մեծ քաղաքներուն մէջ, բարձրագոյն դպրոցներ, զօյեմներ հաստատած են: Եւ ո՞վ կը տատամսի թէ անոնց նպատակն ո՛չ այնքան կը թուլանայ ծաւալել է տգէտ ժողովուրդին մէջ, որքան կը թուլանայ թափանցիկ դիմակին տակ, Հայ. եկեղեցւոյ հաւատարիմ զաւակները որսալ եւ իրենց ցանցաւ կարգերը ստուարացնել է: Կիլիկիոյ կաթողիկոսները չեն կրցած բան մ'ընել, եւ չեն կրնար ընել առանց ընդհ. ազգին օժանդակութեան, որ կը զլացուէր սակայն: Այս ամուլ չըջանին մէջ, միայն մեկ Հայ եկեղեցական, թէ եւ իր եղբայրակիցներէն իսկ հալածուած, հոգեւոյս Շահնազարեան վարդապետն ըսել կ'ուզենք, գիտակցութիւնն ունեցաւ իր կոչման. լսեց իր խղճի ձայնին, եւ իր բովանդակ ինչքը կտակեց Կիլիկիոյ մէջ ժառանգաւորաց վարժարան մը հաստատելու, կամ արդէ սիրուած բառով, Կիլիկեան Դպրեվանք մը: Բայց այս խորախորհուրդ եւ լաւ յղացուած կտակ, ուրիշ կտակներու պէս, եթէ բողոքովին ջուրը չինկաւ, գէթ խտտորեցաւ իր ուղիղ նպատակէն: Կիլիկեցիք ի՞նչ պէտք ունին դպրեվանքի, կը պոռային այն տեսնուան մենծ-աղաները: Իրենց զաւակները միայն պէտք ունէին բարձրագոյն կը թուլանայ, եւ եւրոպայ երթալու հարկէն ալ ազատ կ'ըլլային: Բայց հոգեւոյս կտակարարին ըմբռնածին պէս քաջութեամբ, կարող ու ողջամիտ կղերի մը պէտք ունի եղեր Կիլիկիոյ, ուրիշ ամէն տեղերէ աւելի. որո՞ւ փոյթ: Եւ ահա Շահնազարեան Դպրեվանքին տեղ, թաղեզի բլուրին վրայ նուպար-Շահնազարեան աշխարհական-վարժարան մը կը տնկուի, հանգուցեալ նուպար փաշայի մէկ նուիրատուութեան շնորհիւ, որ հոգեւոյս կտակարարին բաղձացած քանակութեան կը հասցնէ կտակին գումարը: Չենք գիտեր թէ Կիլիկիոյ ժողո-

վուրդէն քանի՞ տղայք կը թուեցան այդ Հաստատութեան մէջ, մինչեւ որ ան կործանեցաւ ասկէ քսան տարի առաջ տնտեսական տագնապներու անխուսափելի հետեւանքով: Բւ հիմաւ այդ կը թուական ձեռնարկէն քանի մը հարիւր ոսկիներ միայն մնացած են, կ'ըսուի, որ քիչ մնաց Արմաշու Դպրեվանքին ճամբան պիտի բռնէին, եթէ մէկ քանի ողջամիտ ազգայիններու բարեգէպ միջամտութիւնը վրայ չհասնէր:

Հիմաւ այս գումարին դոյզն տոկոսով, հազիւ անշուք որբանոց մը բացուած է Սոյ վանքին մէջ, ուր մէկ քանի որբեր պատսպարուած են: Սոյ վանքն աւերակաց կոյտ մը դարձած է գրեթէ, եւ տաճարին հետ, պէտք ունի մեծածախ նորոգութեան: Վանքին միաբանութիւնը ցիր ու ցան եղած է, եւ հազիւ մէկ քանի ծեր ու անկար եկեղեցականներ մնացած են, գրեթէ գերեզմանին եզրը հասած: Այս նիւթական ու բարոյական ողբալի վիճակ՝ արդիւնք է այն անհոգութեան ու ցուրտ անտարբերութեան զոր ազգը ցոյց տուած է միշտ հանդէպ Կիլիկիոյ բազմակարօտ վիճակին: Ո՞վ կրնայ ուրանալ որ, եթէ ժամանակին հոգեւոյս Շահնազարեանի կտակը տեղւոյն վրայ գործադրուած ըլլար, այսօր բանիքուն, կարող ու անձնդիր եկեղեցականութիւն մը պիտի չունենայինք հոն, որ կուրծք պիտի տար կրօնաժաւալական ոտնձգութիւններուն, որ վանքն ու տաճարը իրենց նախկին պաշտառութեան մէջ պիտի պահէր, որ Կիլիկեցի ժողովուրդին պէս ուշիմ, ողջամիտ ու հաւատարիմ ժողովուրդի մը ամէն խաւերուն մէջ պիտի ծաւալէր կը թուլանայ բարիքը, եւ թերեւս այդ ժողովուրդը այսօր օտարալեզու չըլլար եւ իր մայրենի անուշ լեզուն բարբառէր: Եթէ Պատրիարքական հովանաւորութեան տակ, Արմաշու դպրեվանքն սկսած է օգտակար դեր մը կատարել, 20-30 տարի առաջ ինչո՞ւ նոյն դերը չկատարէր Կիլիկիոյ մէջ բացուած

դպրեվանք մը, քանի որ անոր անհրա-
ժեշտ պէտք ունեցած դրամն ալ չէր
պակսեր, զոր Կիլիկիան ճշմարտապէս
սիրող եկեղեցական մը կտակած էր,
իր քրտանց ու աշխատութեանց արդիւն-
քը աննխաղ նուիրելով:

Եթէ այսօր իրաւամբ կը պանծանք
Արմաշու դպրեվանքով, որոյ սաներն
հիմա կարեւոր վիճակներ կը կառավա-
րեն առաւել կամ նուազ արժանաւորու-
թեամբ, ինչո՞ւ չողբանք որ ժամանակին
Կիլիկիոյ մէջ ալ չենք ունեցած այդպիսի
դպրեվանք մը, որոյ սաներն այսօր պի-
տի հովուէին Կիլիկիոյ կաթողիկոսու-
թեան բաղմամբիւ թեմերը: Ո գիտէ
քանի՞ Դուրեաններ պիտի ունենայինք
հիմա, մեք որ այսօր մէկ հատիկ Դուր-
եանով պանծալու փառքով չատանալ գի-
տենք: Միթէ այն ատեն կը պակսէին
Կիլիկեան դպրեվանք մը վարելու կարող
եկեղեցականներ: Արդի Սրբազան Պատ-
րիարքն ու Հայր Եղիշէ Դուրեան, ձեռք
ձեռքի տուած, բաւական եղան օգտա-
կար Հաստատութեան մը վերածելու
Արմաշու դպրեվանքը, եւ հիմա Դուր-
եանի հեռացումը դպրեվանքէն՝ հոմա-
նիշ կը համարուի նոյն օգտաշատ հաս-
տատութեան եթէ ոչ կործանման, գոնէ
անկման ու անփայտման հետ: Ո՛հ, գէթ
մի ընէք այս խոստովանութիւնը, որ
մեր անտարբերութեան դատապար-
տութիւնն է, քանի որ հոգ չենք տարած
մէկէ աւելի Դուրեաններ ունենալու: Եւ
ո՞վ չգիտեր թէ Դուրեան ինքնաբոյս ծա-
ղիկ մ'է, ինքնազարգացման տիպար մը,
իր զարգացումը կը պարտի վանական
խաղաղ մթնոլորտին, ուր զարգացնելով
ինքն ալ զարգացած է: Ուրախ պիտի
լլանք եթէ իր կենդանի օրինակն ազ-
դած լլայ իր բոլոր սաներուն վրայ ալ
հաւասարապէս:

Արմաշեան դպրեվանքին պարզած ա-
պագայ այս պայծառ հեռանկարին հան-
դէպ, հիմա մտածեցէք թէ ո՞րքան ան-
շուք ու ազօտ է Կիլիկիոյ ներկայ հո-
գեւորը, կրթական ու բարոյական վի-
ճակն, որուն պատասխանատուութիւնը

կը ծանրանայ նոյն ժամանակի ազգային
գործիչներուն վրայ, եւ շարունակու-
թիւնն ալ պիտի վիճակի արդիներուն,
եթէ յամառին յարատեւել այն դաւա-
նութեան մէջ, զոր մեր նախորդ յող-
ուածով պարզեցինք, զի մէկէ աւելի կա-
թողիկոս ունենալն այնքան փաստակար
չէ եղած ու չի կրնար լլլալ որքան փա-
սակար չէ եղած Պոլսոյ ու Երուսաղէմի
մէջ մէկէ աւելի Պատրիարք ունենալն,
ինչպէս որ Յունական եկեղեցւոյն հա-
մար ալ փաստակար չէ եղած տիեզերա-
կան պատրիարքէն զառ Աղեքսանդրիոյ,
Երուսաղէմի եւ Սնտիոքի մէջ ուրոյն ու-
րոյն Պատրիարքներ ունենալը: Կիլիկիոյ
կաթողիկոսութիւնը դարաւոր պատմա-
կան դէմք մ'է, զոր պարտինք պա-
հել պահպանել. անիկա պարզ առաջ-
նորդութիւն մը չէ, Կիլիկիոյ պէս ըն-
դարձակ վիճակի մը հովուապետութիւնն
է, զոր պաշտօնապէս ճանչցած է ու կը
ճանչէ Կայս. կառավարութիւնն, եւ կը
բաղձայ պահել այն գերբին մէջ ուր
գտած էր Դողանի գրաւման միջոցին:
Մեք ալ պէտք է անվթար պահենք
զայն իր նախկին ազդուութեան մէջ:
Յայտնի է թէ ինչպէս երէկ Ռուսիոյ կրթ-
թական կամ լուսաւորութեան նախա-
րարութիւնը Ռուսահայոց դպրոցներն
իր ուղղակի իրաւանութեան հնթարկեց,
ո՞վ կ'երաշխաւորէ թէ վաղն ալ Ռուսիոյ
հրօնական նախարարութիւնն իր իրաւա-
սութեան տակ պիտի չառնէ հայոց ե-
կեղեցիները: Օրթոտոքս բաղերաներու,
ուրա բօրերու սկսած կրօնաճաւաղական
արշաւանքներն ու ասպատակումները,
որոց արձագանգ եղած է առօրեայ լրա-
դրութիւնը, միթէ նշան մը չե՞ն թէ
ստորագծեալ երէկն ու վաղուանին մէջ
հազիւ քանի մը առաւուտ եւ երեկոյ մնա-
ցած են:

Բ. Պ

*ԾԱՆՈԹ:—Նորանշան երեւոյթ մ'էր այն դրա-
մական նուէրը [150 ոսկի] զոր Բարիզ բնակող մե-
ծահարուստ Հայ մը հարսանեկան ուրախութեան
միտով զրկեց. Դանիազարեանի կտակի զուտարին
վրայ աւելցնելու պայմանաւ: Այս հայուն սրտին
մէջ լաւ ըմբռնուած քարեգործութեան մը սերմը
կայ, զոր մշակելու տեղ, փծացնելու փորձեր ըրին
վարձեալ գրիչներ: Աստիք պատճառ եղան մէկ քանի
որակի գրիչներ Բարիզեան գործարանի մը մէջ ար-
ուեստսովորելու փնտռուած այլ չգտնուած առիթէն:

ՅԱԽԵՐՈՒ ԼԵՁՈՒՆ

[ԲՄԱԾԻՆ]



Վ. Փ. ԽԱ

ԼԵՁՈՒՆ չէ՞ ասիկա այն ցաւերուն զոր Բասթէօն ու Քօլս շինուելով տաղեցին, ոչ ալ վիշտերունը՝ որոնց մասին Ռընան ու Լըմէթր գրիչով տողեցին։ Այդ պայքարումներուն առթիւ գիտութիւնն ու բարոյականը հատորներու ըրուր մը ունին որուն մէջ սակայն, ի՞նչ կ'ըսէք, տո՛ղ մը չեն գրաւած այն պզտիկ օրէ ծնող, օրէ մեռնող ցաւերը զոր կը կրէ մարդ եւ հաճոյքով կը տանի՝ Կեանքը սերտած, կեանքը ապրած ըլլալու եւ հազցնելու համար Անոր հրապոյր ու կենդանութիւն։

Անիրաւութիւն մը չէ՞ ուրեմն այս զանցառութիւնը, մանաւանդ զանոնք պղծիկ կոչելը քանի որ «ոչ մարդկութեան մէջ պզտիկ պատահարներ, ոչ ալ բուսական աշխարհին մէջ պզտիկ տերեւներ կան», ինչպէս ըսած է Հիւկօ։

Ախրա՛ր սակայն օրը օրին այդ ցաւերուն յուշատետրը կը բռնէ գոնէ, ու միտքը, իր կարգին, լեզու, իմաստ կուտայ անոնց։ Բանի մը դրուագ ատոնցմէ։

... Տաք վիճարանութեան մը բռնուած ես, ընդդիմախօսող անասնաբար եւ յանրաւի կ'անարգէ քեզ. կը յորդիս եւ շնորհքով պատասխանով մը կը լուսա գինքը, պատասխան որով իր եսը կը կծկուի, կը նուատանայ ալ։

Հինգ մատերուն ցպիկները իրար միացած՝ կուգան շաշիլ աշտիդ մոտ զեղծին վրայ, տաքուկ մզրտուք մը կ'առնեն հոն որ կ'անցնի շուտով, բայց հոգիիդ խորը կը մզուի իսկոյն ապտակը փակցնողին յիշատակը, անոր որ ըզեզով սնանկ՝ ուժին հաստութեանը դիմած էր։ Ողորմելի՛ն։

Աղուոր պարտէզ մը կը գտնուի այն ընտանիքին հետ. գարունը գոյնզգոյն միւններ բանած է չորս դին։ Պահ մը կը նայիս որ Անոր հետ մինակ ես միացեր թաւուտի մը խորը։

— Ա՛խ, սա վարդը... աղերսով մը կը ձայնէ քեզի՝ ցոյց տալով երկու մարդաչափ բարձրութեան մը վրայ բացուող հրապոյն խոշոր ծաղիկը։

Ոչ թէ երկու մարդաչափ, հապա երկինքի մը վերութիւնն ալ ունենար, այդ բոպէին ներսդ գիւցազնութիւնը կը ծնի վեր թռչելու եւ ընկերու հիդ գոհացնելու։ Պատնի վեր կը շուլլուիս. քարերու թիրտ գգուանքը կը վայելեն մէյ մը մատներդ, յետոյ հասակդ կորած ու թեւերդ ճիգով մը երկընցուցած՝ ձեռք կ'անցունես ոստը որուն ծայրը ըզձալի ծաղիկը կը սարսռայ։ Հաւասարութիւնդ տուժած ես սակայն ու ինկած՝ փշուտ թուփերու ճիւղճղանքին վրայ։ Հագուստիդ յօքը ելած է եւ ձեռքերդ արիւնի շիթեր կը ցուցադրեն։ Ի՞նչ փոյթ, վարդը փրցուած է ալ. փուշերուն խօստուքը ժամուան մը ցաւ է։

Մատներդ եթէ մոռնան ճանկառտին կսկիծը, չրթունքդ գոնէ ապերախտ չըլլար վերջի մեղրէ վարձատրութեանդ մասին։

* * *

Անոր տունն ես, ինք վարը սուրճ եփելու դբաղած։ Սենեակը, մինակութեանդ մէջ կը խորհիս իր վրայ՝ որ անխօսուկ ցաւցուցած է հոգիդ իր մանկամարդ հմայքներովը։

Դէմիդ ձորձակալէն կ'առկալուին իր շալը եւ թաւիչ ամազոնը, որոնց վրայ խառուսիկ հեշտանքի մը պէս կը փորձուիս պըտըսցունել չրթներուդ տենդը։ Յանկարծ ձեռքդ — զոր լքուն դիրքով մը վար կախած էիր, — վրան խարտոց քսուելու տպաւորութիւնը կ'ունենայ։ Տունին փխսկին է որ անօթի քծինքով մը եկած է ձեռքդ լզուըռտել։ Ձեռքդ չի մոռնար երբէք այդ լեզուին ասղնտող հպանցքը, խորթ համրոյրի մը պատրանքը առթելով ա՛րդէն տառապած հոգիիդ։

* * *

Երկսեռ հաւաքոյթի մը գացած ես եւ խօսքի բռնուած անուշ խարտեաչի մը հետ. ան իր կարգին մտիկ կ'ընէ եւ գմայլուն կը դիտէ քեզ. կօշիկներուդ լուսթրիէն մինչեւ մազերուդ հոտաւէտ թաւի՛ւ սանտրուածքը։

Յանկարծ լան ջքիդ վրայ լուի կճուք

կ'զգաս, ա'յնչափ բարկ, կծու ա'յնչափ՝ որ կարծես վերնամորթդ հոն քերթած ու պղպեղ ցանած ըլլային: Անզգամ միջատին կատակը չես մարտեր, կ'ուզես վանել դայն: Շոճօճեալ շապիկդ թող չիտար քեզ քերուել, ոչ ալ կրթութիւնդ՝ անվայել շարժում մ'ընել:

Ակուադ սեղմած՝ կը շարունակես խօսելիքդ, թողլով որ լուս իր շահատակութիւնն ընէ մարմինիդ գաղտամետ անկիւնները, մինչեւ որ ստիպէ զքեզ բաժնուել պահ մը՝ դուրսը մորթիդ մարմաջը անցընելու:

Կճուածքին ցաւը կ'անհետի փութով, բայց այդ պզտիկ տառապանքիդ պզտիկ յիշատակը ներսդ կը շինուի իսկոյն, տաք, տարփոտ քեք-ա-քեք մը մէկ շունչով հմայածափ ընող լուսն յիշատակը:

* * *

Կոկիկ, զիկզակ սրամտութիւն մը թրուցուցած ես դէմինիդ, սրամտութիւն մը որ անձնասիրութիւնը չի' ճանկուտեր, հապա չարաճճիօրէն կը փայտալէ գայն: Քմիծաղ մը կը փթթի անոր երեսին, ու, բոյթ մատը հեծցնելով միջամատին վրայ՝ պոնդ մը կուտայ քիթիդ:

— Անառակ մը պըռէ'... ձայնելով:

Քիթիդ կարկառը կը մզմզայ քիչ մը: Ա՞տշափ միայն, նոյն պահուն չե՞ս խորհիր որ այդ պոնդը փառքի դափնին եղած է սրամտութեանդ:

* *

— Տեսէք ի'նչ անուշ կը հոտի կոր, կ'ըսէ ան, ձեռքդ տալով ճերմակ խատուտիկ մեխակ մը: Ան՝ այն աղջիկն է որուն սիրտդ չէ փակած ու ցուրտ վարուած ես հետը, հակառակ իրեն տարփոտ նայուածքներուն:

Աչքդ հեշտանքով մը խուփ՝ կը հոտուրտաս գայն, ու,

Բշի'ու'...

Կը փռագտաս մէկէն: Ռուսգերուդ կը ճիկները կը խըխին միշտ, և,

Բշի'ու'... մէ'յ մըն ալ:

Իր վրէժը՝ մեխակին վրայ քթախոտ ցանելով ուզած է լուծել քեզմէ: Քիթիդ փոսերուն սուտ հարբուիք կ'անցնի, բայց հոգիդ կընա՞յ մոռնալ ծիծաղելի չարութիւնն աղջկան սիրտին՝ որ իր չսիրուած

ըլլալու խորունկ վիշտը՝ առանկ փցուն կատակով մը փոխանակած է:

* * *

Երեկոյթը թափ առած է: Իրանին հեշտ բեռը բազուկներուդ օղակին մէջ աղխած՝ դուն ալ կը դառնաս, կը դառնա՞ս վալսին խելայեղ յորձանքովը: Պարուհիդ տխուր է սակայն, քեզ չի նայիր անգամ, և «մէրսի, գլուխս դարձաւ» կակազելուն վրայ՝ կը տանիս նստեցնել զինքը:

Իր անտարբերութիւնը կը սպաննէ քեզ: Ատ շնորհներով, դէմքի ա'տ անթերի գեղով օժտուն աղջիկը ինտո՞ր... արդեօք...: Վարանքիդ մէջ աչքդ չի դադրիր հետեւելէ անոր ամէն շարժումներին: Զէ', քեռէ ետքը մէկո'ւն չելաւ պարելու, բօճե՞կ կապոյտ թաշկինակը բերնին՝ անկիւն մը մնաց տըրտում ու անբարբառ:

Կը պատրաստուիս մեկնիլ. կարգը անոր կուգայ ձեռքը թոթուելու: Ապանքդ երջանկութեան կը վերածուի՝ երբ ձեռքդ իր ձեռքին մէջ դրած՝ քանի մը ըրպէ կը մնայ հոն, անոր ափին ուժգին աքցանին տակ: Իրա՞ւ: Այո՞, ինչ որ բերնովը կամ նայուածքովը չէր համարձակած խոստովանիլ՝ այդ պինդ ձեռնասեղմումովը կը յորդի, ձեռնասեղմում՝ որ մատներուդ յօդերը մէջ մէջի կ'անցունէ:

Ինչպէ՞ս մոռնաս մատնակորներուդ այդ կրօնը, երբ մտածես թէ առո՞ր պարտիս այդ եթերէ փետուրէ՞ շինուած էակը որ հիմայ կ'ինդ է...:

* * *

— Ո՛ւհհ... կը ճչես սիրտիդ խորունկէն՝ դէմքդ ճմրթկած:

Կամիթը զոր այդ դիմակաւոր տօմիսն փակցուցած է թեւիդ անոսկր դնդղուցին՝ հոգիիդ տունը կոթ թացուցած է: Ո՞վ կընայ ըլլալ այդ կինը որ համարձակի ինծի պէս կարգուկ տղու մը հետը խնայ, կը մտածես իսկոյն: Ու երբ դիմակները վար առնուած են, առոնց մէջ կը նշմարես քոյրդ որ քը՛ռ քըռ կը խնդայ իր կատակին վրայ: Այդ քմիծաղին մէջ քրոջ սէրին սրբութիւնը չի կա՞յ որ յայրատ նկատումներէդ կը թոթուէ քեզ ու կ'ամոքէ իսկոյն նուրբ կսկիծը թեւիդ ճմրուքին:

* * *

...Բոլոր այս պզտիկ վաղանցիկ ցաւընու-
քէն յետոյ որոնք երիտասարդութեանդ խան-
դոտ շրջանին՝ կուգան լենալ յիշատակնե-
րուդ զամբիւղին մէջ, երբ ժամանակը աղ ցա-
նած է ալ մազերուդ գանգուրին վրայ՝ չե՞ս
բերուիր երբեմն, — թախծագին վայրկեան-
ներուդ մանաւանդ — անդրադառնալ պահ
մը կեանքիդ Փակագիծին վրայ ու երեւակա-
յութիւնովդ ընդզգալ այն բիրտ ցաւերն ալ
որոնք պիտի առթուին Սեւ Ծակին մէջ եր-
կնցած ատենը մարմինիդ՝ բունծ հողին թի
թի վրադ թափուելուն, եւ այն սուր կըս-
միթները զորս բիւրաւոր որդեր պիտի տան
մխիթ՝ լիբր խածատու մով մը, և որոնց մա-
սին, ափսո՜ս, պիտի անզգա՜յ մնայ պաղած
դիակդ անկենդան ...

Հ. Կ. Մայիս 1917

ԱՆՕԳՈՅ ՍՈՍՍՅՈՒՄ

Ա՛յ չզգալու համար երբեք, յաւիտեան,
Յարանուն, վառ սեղչերով լի սիրտս հուր
Ա՛յ մարելու համար նաեւ վե՛սեր սուր,
Երակներուս մէջ քափեցի բուռն ա՛յնքան,

Հալած կապար սափ՝ արիւնին իմ փոխան .
Բայց այն ասեմ կը խորհեի... ճիգս եւ զուր,
Երկու աչքերս ալ փորեցի եւ քափուր
Ձոյգ մ'այդ սրգեղ խողովներուն մէջ պի՛նդ
լայն

Մխեցի բուռն երկու շերտեր պողպատի
Որպէս զի գանկս անպատահան ու միշտ կոյր
Զքափանցեւ դուրսի աշխարհը լկի...՝

Բայց ա՛յն ասեմ ալ ունեի մէջս աշխարհ
Մը խորհուրդի զոր ուզեցի վանել զո՛ւր
Եւ մութն արդէն ոչինչ մը չէր ինձ համար...

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ



ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՐԱՆ

ԱՄՓՈՓՈՅԲ. — Մանկավարժութիւնը ման-
կան դաստիարակութեան նպաստող սկզբանց
ծանօթութիւնը կ'ամ գիտութիւնն է. — Նախ
անհրաժեշտ է ճիշտ գաղափար մը կազմել
դաստիարակի պաշտօնին վրայ, որոյ արժա-
նապատումութիւնը կը հաստատեն երեք նկատ-
րութիւններ. 1. Դաստիարակի պաշտօնը ճշ-
մարիտ առաքելութիւն մ'է, եւ ոչ քի հաստա-
րակ արուեստ մը. 2. Դաստիարակին յանձ-
նուած են մեծագոյն շահեր, քննանեաց, եր-
կրին եւ քնկերութեան կողմէ. — 3. Դաստիա-
րակն իր ձեռնաց մէջ ունի ճշայն ապագան,
նիւթական, մտաւորական եւ բարոյական եր-
բեակ տեսակետով:

Բարւոք կրթել մանուկները, այսինքն՝
Ֆիզիքական բնութիւնն ու մարմնոյն խնամք-
ներն առանց մոռնալու, զարգացնել անոնց
միտքը, կրթել անոնց սիրտը, և այսպէս
ապահովարար յաջողիլ մարդկային ընկերու-
թեան օգտակար անդամներ ընելու զանոնք,
ահա ա՛յս է դաստիարակութեան նպատա-
կը, դաստիարակին մեծ գործը: Ուսուցա-
նել այս կարեւոր գործն ի գլուխ հանելու
գործնական միջոցները, ցոյց տալ այն կա-
նոններն ու սկզբունքները, որք մեր սե-
փական փորձառութենէն կամ ուրիշներու
փորձառութենէն բղխած են՝ մանկան մտա-
ւոր ու բարոյական կարողութիւնները մշա-
կելու ամէնէն ազդու ու գործնական միջոց-
ներու մասին, ահա ա՛յս է մանկավարժա-
կան դաստիարակութեան մը առարկայն:

Մանկավարժութիւնը, ինչպէս իր անունը
ցոյց կուտայ, ծանօթութիւնն է այն սկզբունք-
ներուն և միջոցներուն որք կը նպաստեն
դաստիարակութեան: Բայց այս սկզբունք-
ներն ու միջոցները շատ քիչ օգուտ պիտի
ընծայէին, եթէ դաստիարակը, որ զանոնք
պիտի գործադրէ, ըստ բաւականի պատ-
րաստուած չըլլար այդ կարեւոր գործին, և

կեանքի բարձր ու յուզող երեւոյթը, որով՝ անոր խտէալ բարձրութեան հասնելու ոգիէն, տենչէն մղուած միայն ունեցած էր ճշմարիտ յուզումին ու ներշնչման վայելքը, եւր մանաւանդ համոզուած էր թէ կնոջ գեղեցիկ արտաքինը արհամարհանքի միայն արժանի էր, որ ներշնչող ոյժ մը, կամ—եթէ կ'ուզէք— մուսայ մը ըլլալէ հետո՝ յաճախ է'ն անձնական ներշնչումները արգիւղող, ջլատող տարը մ'իսկ էր :

Իրերու այս վիճակին մէջ ինչպէ՞ս ուրեմն Վահէ այսպէս կը շիտթէր, կը վրդովուէր կնոջ մը արտաքին գեղանկարէն, ինչպէ՞ս իր այդ անհերքելի թուող համոզումը կը քայքայուէր յանկարծ :

Որովհետեւ մինչեւ ցարդ Վահէ կնոջ ներդաշնակ այլ անհնթեթ ձայնը միայն լսած և պչրոտ նայուածքներու, շողորթ խօսակցութեանց կամ արուեստակեալ շարժի ու ձեւերու միայն հանդիպած էր : Զէ՛ր հանդիպած կնոջ մը որուն դէմքը ու մարմինը հոգիին ու մտքին համաձոյլ ներդաշնակութեամբ գեղեցիկ երեւնային :

Եւ Յիմիի անսահման խորութիւն պարունակող աչքերուն մէջ քաղցր դէմքին եւ անրիժ ճակտին վրայ կ'արտաբայւէին բարձր հոգիի ցոլացումը, սրտին բարութիւնը, ու մըտքին մեծ իմացականութիւնը, և հրեշտակային գեղեցկութիւն մը կուտային այդ ծիծղուն թէեւ՝ այլ մեղամաղձոտ դէմքին :

Ու Վահէ յանկարծ կը վճռէր որ եթէ արուեստագէտը չունենայ իր մտածումներուն մէջ պատկերը ասանկ հուրիի մը, իր արուեստը թերի պիտի մնայ :

Դեռ այդ նայուածքին, այդ աչքերուն առթած չփոթութեամբ տողորուած էր Վահէ : Այդ չփոթութիւնը ներշնչումի մը պէս բան մըն էր : Քունքերը կը թնդային ու ալանջները կ'որոտային : Ելաւ ու դաշնակին երթալով սիսաւ հարուածել զայն խռովայոյդ եմբօսփիզասիօնով մը :

Վահէն այսպէս դաշնակը դարձնելու վիճակին մէջ տես-

նելով՝ ալեկոծ, մոլեգին, մրրկոտ, անոր տարօրինակ, գրեթէ յիմար ցնցումները, անոր ազատութիւնը, յանդգնութիւնը դիտելով, այդ մասներուն տակ, ուր խագերը կը թաւալէին, կը սլանային կրակոտ, Նորէնֆ կը զարմանար քաղդատելով ադ Վահէն քիչ մ'առաջուան տրտում, վարանոտ, մտացի, ապշած Վահէին հետ :

Դաշնակի հոգիէն յղխող այդ ներդաշնակութեան հոռանքին մէջ Նորէնֆ կ'իմանար բողոքող բառերը այդ լըքուած տղուն, անոր կսկիծները, ցաւերը բոլոր : Տաղանդին՝ ճշմարիտ ներշնչումով հեղինակած հատուածին մէջ կ'զգացուի, կ'մթռնուի երաժշտութեան լեզուն : Ու կը խորհէր Եւրոպացի հռչակ հանող արուեստագէտներու վրայ որոնց անունը մարդիկ տեսակ մը երկիւղածութեամբ բերանին կ'առնեն, և որոնց շատը, սակայն, Վահէի կեանքին պայմաններուն մէջ՝ համբաւուող անկարողներ պիտի մնային :

Սենեակը, այս պահուն, նկարչային հիանալի տեսարան մը կ'ընծայէր, երբ Վահէ, ինքզինքը մոռցած, կը թուէր տարուիլ սանձարձակ դաշնակին փրփրուտ, խօլ հոսանքէն, — ուրկէ գերագոյն լեզուի մը ամէն երանգներով իր հոգիին մէջ ինկած նոր ու հզօր վրդովումները, երկիւղները, կիրքերը, տենչերը կը գոռային, կ'եղանակուէին, — ծածկուած՝ Նորէնֆի՝ այդ անուշ, համալրելի մարդուն հիացման արտայայտութեամբ և գոհունակութեան ժպիտովը որ սակայն մերթ կը խամրէր յանկարծ, այդ նօթերուն ետեւ դառնացած սրտի մը գալարումներուն մտածումովը—որոնք սակայն հիմա Վահէի համար վերջուշումներ էին միայն,— եւ երբ Յիմի ալ կայնած կը մնար հոն, դաշնակին քովը, Վահէին մօտը, ժպտուն դէմքի մը անբացատրելի արտայայտութեամբ, ձեռքերը մեղիօրէն վար ձգած, ու աչքերը, ովկէա՛ն աչքերը, առաջին անգամ ըլլալով պարապութեան մէջ պաղած՝ խորհելով կարծես կեանքի այն հակապատկերներուն վրայ ուր կը գտնուէին յոյսը և պատրանքը իրարու գիրկ նետուած,

ուր փոթորիկը հանդարտութեան մէջ է, ուր ամէն երջանիկ ժպիտի վերեւը արցունք մը կը բարախէ, կաթիլ մը լեզի արցունք ուր կը ձգտի, ամէն վայրկեան, այդ ժպիտին հետ խառնուիլ, ու սրտին, ժպիտը ծագող այդ գործիքին մէջ իյնալով խոշորնա՛լ, խոշորնա՛լ և օր մըն ալ իր ահաւոր ու անպատկառ հեղեղին մէջ կուլ տալ ու խեղդել այն սիրտը որ դեռ պէտք ունէր թերեւս տրոփելու:

Այս երանաւէտ մթնոլորտը թունաւորող արարած մըն ալ կար սակայն, կին մը, Ֆիմիի մայրը — անգամ մըն ալ ներկայացնենք — Լուսեան որ իր նստած անկիւնէն, ջգուտ ու պրկուած դէմքին վրայ նախանձով ու ատելութեամբ շողա-ցող երկու կատաղի աչքերէ կծու ակնարկներ կ'արձակէր վերացող այս խումբին վրայ: Ու զայրացած վերջապէս իր նայուածքներուն ապարդիւնութենէն — քանի որ ոչ ոք իրմով կ'զբաղէր այդ պահուն — տեղէն ելնելով ամուսնոյն քովը գացած ու խօսիլ սկսած էր հետք փափտւածով մը:

— Չը հասկցայ գնաց. Տիրանը ասանկ բան չէր ըներ ասա... ասա՛նկ մէկը մեր տունը բերե՛լ: Հե՛մ ալ ի՞նչ պիտի ըլլայ բիանօ չալելը էրիկ մարդու համար: Ապուշի պէս մունչ մուռնչ նստեցաւ նստեցաւ, հիմա ալ ելեր բիանօ կը շալի կոր... գոնէ եթէ զարկածներէն բա՛ն մը հասկցուի...

Ի՞նչ զգաց Նորէնոֆ երբ իմացաւ այս արհամարհալից ճիւղալային խօսքերը ճիշտ այն պահուն ուր իր է՛ն մեծ հիացումը ու ցաւը կ'ունենար այդ դժբաղդ տղուն համար: — Բա՛ն միակ չարտասանեց ան, բայց դէմքին յեղակարծ այլայլութիւնը, տագնաւած երեսը, զոդդոջուն շրթները, ամէն ինչ կը մատնէին թէ յանկարծական ալեկոծում մը ունեցած էր ներսը, թէ դիւցալանական ճիգեր կ'ընէր, երեսն ի վեր չը պոռալու համար կոկորդիլն մէջ եռացող գայթակղական բառերը:

Ու կը մտածէր թէ հապա Վահէ՛ն, ի՞նչ զայրոյթներ, դառնութիւններ զգացած, ի՞նչ վիրաւորանքներ, տագնապ-

համար սրբապղծութիւն է ասանկ պարագայի մը մէջ սուրբ հրճուանքէ մը զատ տարբեր բան իմանալը:

Ու իր մատնետուն մէջ կ'զգար Տիրան մերթ սարսուռը Ֆիմիի պաղ ձեռքին...

Ժպտուն էր սակայն ան ու զուարթ՝ թեթեւ կին մը կարծուելու չափ:

Վահէ՛ ալ այսպէս կը խորհէր:

Ինչո՞ւ համար ուրեմն կորսնցուցած էր Վահէ իրեն յատուկ համարձակութիւնը: Ինչո՞ւ համար դեռ կը մնար տրտում ու յուսահատ, հակառակ իր նկարագրի այն ուժին որով կը յաջողէր զուարթ երեւնալ միշտ օտարականներու մօտ:

Աչքերուն մէջ սակայն տարբեր բաներ մը կը յայտնուէին: Հոն պիտի կարդացուէր թէ ալ այն թշուառ արարածը չէր ան որ օրերէ ի վեր ու դեռ մէկ երկու օր առաջ իսկ կը տուայտէր հոգեւոր խորհրդածութիւններու անել բաւիղին մէջ, թէ բոլորովին տարբեր զգայութեան մը մէջ էր, թէ այդ տրտմութիւնը զմայլանք ու յափշտակութիւն էր, այդ յուսահատութիւնը՝ իրականութեան մէջ եղական վեհազդեցիկ էակի մը գոյութեան հաւատալու մասին իր ունեցած զարմանքն ու երկիւղն էր:

Այս պահուն յանկարծ տարօրինակ ուժ մը երկու նայուածքներ իրարու մէջ նետեց: Ֆիմի և Վահէ իրարու նայեցան, իրարու աչքի մէջ նայեցան բոպէ մը, դա՛ր մը: Խենդեցնող հմայք ու խորութիւն ունէին այդ աչքերը: — Վահէ կարծեց թէ սիրտը պիտի փրթէր: Տարօրինակ զգայութիւն մը, ջերմութեան լայն շունչ մը ծաւալեցաւ ամբողջ էութեանը մէջ, զգացում մը դեռ իրեն անծանօթ, որ երակներուն մէջ կեանքի, հաճոյքի, կիրքի, փափաքներու տարրեր հոսեցուց:

Ֆիմիին տեսքը արբուեցուցած, թոված էր Վահէն:

Վահէի համար, սակայն աներեւակայելի, անհաստատալի էր այս վիճակը, երբ՝ երաժշտութեան մէջ միայն գտած էր

ստուերագծուիլը աստեղազարդ կամարին վրայ՝ բոլորովին նոր յուզումով մը կը թրթռար, նոր երջանկութեամբ մը կը նաշէր անոր լուսաւոր պատուհաններուն։ Ալ վերջին անգամն էր իր հոն երթալը, մինչ Վահէի, իր սիրելի մտերիմին համար հոն երթալը կ'սկսէր։

Վայրկեան մը ետքը սենեակը մտան։

Նորէնոֆ, ժպտադէմ, Վահէի ձեռքը սեղմեց։

— Ուրախ եմ, Պ. Վահէ, ձեզ յականէ ալ ճանչնալուս համար վերջապէս։

Յետոյ ներկայացաւ տիկնոջ, Լուսեային, որ, անժպիտ, առանց ձեռքը տալու, միայն գլխու ցուրտ, թեթեւ շարժումով մը պատասխանեց այն շնորհակալութեան ու քաղաքավարական բանաձեւին զոր Վահէ սակայն հազիւ կրնար արտասանել։

— Պատիւ ունիմ Տիկին...։

Տիրան իր բարեկամը ներկայացուց այնուհետեւ Ֆիմիին որ ոտքի կայնած՝ կը սպասէր ուրախ, վսիկոտ, ապշած, հետաքրքիր։ Տիրանի ձայնը դողդոջ ու խղճուկ եղաւ։

Երկար նայուածք մը ձգեց Վահէ այդ շուշանի պէս տըժգոյն աղջկան վրայ, ու չը կրցաւ բռնել այն ձեռքը զոր ան՝ աչքերը գետինը գամած՝ իրեն կը պարզէր։

Վահէ, շնչասպառ ու տոժուեցած, նստաւ աթոռի մը վրայ։

Ֆիմի ալ գացած նստած էր Տիրանին քովիլը ու ձեռքը առած իր ափին մէջ, պզտիկ տղայ-աղջկան մը պէս անոր մատներուն հետ կը խաղար։

Ասանկ վայրկեանի մը մէջ, դեռ երէկ, Տիրան անոր ոտքերուն առջեւ ծունդի պիտի խնար, այդ ոտքերուն պիտի փարէր ու պիտի պոռթկար իր զսպուած խուլ տարփանքը։

Այսօր սակայն, այս պահուն, մեծ պաշտպան եղբայր մըն էր Տիրան, մինչեւ իսկ հայր մը, պապա մարդուկ մը որուն

ներ ու վհատութիւններ ունեցած էր, ժայթքուած ատանկ թունալից բառերու ի լուր, ըլլա՛ն թող անոնք Լուսեայէ մը մինչեւ իսկ։

Անդին, վսեմ ներշնչման մը արտադրութիւնը եղող այդ երկնային եղանակը, որուն զաղափարներուն ի լուր՝ մարդ կ'զգայ թէ երաժշտութիւնը միակ լեզուն է հոգիին՝ որ ամէնէն խորունկ իմաստներով ու ցնցող արտայայտութիւններով կը խօսի ու ամէնէն վեհ ու ազնիւ ձգտումներու կը թելադրէ անհատը, ու այն մագական թեւերը որ կ'առնեն կը տանին քեզի աշխարհ մը ուր կեանք չիկայ, մահ չիկայ, այլ ուր երազներ կան, բաղձանքներ, բարձրութիւն, մտածում, այո՛, այդ երկնային երաժշտութիւնը պահ մը այնքան ոգեւորուելէ, խանդավառուելէ ետք կը դանդաղէր, կը մեղմանար հետզհետէ, կը լայննար, և հուսկ ուրեմն կ'անէանար իբր թէ շնչահեղձութեամբ մը մօռեմօսի մը վերջին շունչին մէջ։

Լուած էր ալ Վահէ, ու կ'ունկնդրէր իր կարգին սուելի մեծ ու խորին երաժշտութիւն մը, Ֆիմիի ձայնը մեղմանուչ, հեշտալուր, որով ան կը յայտնէր իր անչափ սէրը միւզիքի այդ սուրբ արուեստին, մանաւանդ հիացումը «իր տաղանդին» համար։

— Ադ մագերը ինչո՞ւ ատանկ երկնցուցեր է, կը շարունակէր ասդիէն Լուսեա ընդհատելով Նորէնոֆը որ ելած՝ իր սքանչացումը կը յայտնէր Վահէի, ի՞նչ են ատոնց նշանակութիւնը, հէ՞, ոչի՛նչ, զեվզեկութիւն, արտառոցութիւն։

— Զեվզեկութիւն, — կը կրկնէր ինքնիրեն Նորէնոֆ տարուելով այն անգեղազէտ դիտումին որով մեր է՛ն զարգացեալ դասակարգն ալ արհամարհանքով նայած է մագերու այդ երկնցածուծեան, — զեվզեկութիւն. բայց ինչո՞ւ երբ այսքան մարդեր մօրուքնին կ'երկարեն եւ ուզուած ձեւերը կուտան անոր, բնականութիւն կը նկատուի ու մազը երկարելը արտառոցութիւն, զեվզէ-

կութիւնն : Նախապաշարո՞ւմ, տգիտութիւնն : Բայց պատճառը այն է որ անոնք կը դատեն թէ այդպէս կը վալլէ իրենց դէմքին : Կինն ալ, ո՞րքան ալ գեղեցիկ ըլլայ, պիտի տգեղնայ, անհրապօյր, անբանաստեղծական էակ մը պիտի դառնայ երբ այդպէս արմատէն կտրես իր մազերը : Կնոջ գեղեցկութեան մեծ մասը, գեղեցկութիւնը ցայտեցնողը իր մազերն են : Ո՛չ ոք կը փափաքի տգեղ երեւնալու : Բնատուր գեղեցկութիւնը իր ամբողջութեան մէջ վայելել չը գիտնալը տգեղութեանց, անզգայութեանց է՛ն ապշեցուցիչն է : Անշուշտ արդիսօր որ ամէն բանի գեղագիտական կողմը կը նըշմարէ, որ ամէն բանի մէջ նրբութիւն, վայելչութիւն, ներդաշնակութիւն կը խուզարկէ, և որուն վերջապէս իտէալն է ճաշակը, գեղեցիկը իրենց իսկութեան կատարելութեան մէջ, անշուշտ նախ իր անձը պիտի պատշաճեցունէ իր էութեան այս անհրաժեշտ պէտքին :

— Բիանօ՞, երկա՛յն մազեր, կը շարունակէր Լուսեա, ատոնք ամենքն ալ ոչինչ բաներ են : Թո՛ղ գործի մարդ ըլլայ, փարս վաստկի ու վրան գլուխը քիչ մը չտկէ, ատանկ հագուստներով ասանկ տուն մը մանեւր ամօ՛թ ըլլա՞լն ալ չը գիտեր կոր... :

Ա՛լ մաիկ չէ՛ր ընէր Նորէնօֆ :

... Մէկ երկու ժամեր անցած էին, ու հիմա երկու բարեկամները հտ կը դառնային ծառուղիին ճամբէն :

Երկուքն ալ չէին խօսեր, կամ մանաւանդ չէին համարձակեր խօսիլ :

Վահէ, սակայն, խղեց լուսիւնը :

— Տիրա՛ն, ըսաւ վշտաբեկ ու դողդոջուն ձայնով, Տիրա՛ն, իմ ամէն ընդհանրուած երջանկութիւններուս վիշտ մը կ'ըսպառնայ, իմ ամէն դրախտ կարծած վայրերուս մէջ պահուըտած դժոխք մը կայ... :

Ի լուր այս տխուր չեչտերով արտասանուած տխուր խօս-

ուիր : Եւ կամքոտ չճնողէ մը կամք ունենալ պահանջելը ապուշէ մը խելք պահանջելուն կը նմանի :

Բայց Վահէ զօրեղ կամք եւ նկարագիր ու մեծ տաղանդ ունենալով հանդերձ չէր յաջողած :

— Ինչո՞ւ... — Ուրովհետեւ կամքէն ու տաղանդէն վեր բան մը կայ, անոնցմէ զօրաւոր, զանոնք արդիւնաւորող, կամ, եթէ ուզէք, զանոնք չքացնող բան մը՝ դրամը, ոսկին, ուրիշ խօսքով՝ բաղդը որուն գոյութիւնը դրապէս կը ժխտեն ոմանք :

Է՛հ, մէյ մը իրենց տարրին, իրենց միջավայրին մէջ՝ ու պիտի տեսնուի թէ իրենց ճակատագիրէն և ժողովուրդէն դատապարտուած այդ անձերը ի՞նչպէս կամք ունին եղեր :

Եւ մօրեղբայրը թէեւ Տիրանի այս բաները խօսած ատեն մերթ առարկութիւններ ըրած՝ բայց վերջապէս համակրանօք ողջունած էր անոնց իրաւացիութիւնը : Հոն՝ դեռ այս խանդավառող բաներուն վրայ կը խորհէր Տիրան, երբ Վահէ իրեն առաջարկած էր կարգաւ այդ յօդուածը : Տիրան դեռ իր անձնասիրութեան մէջ այսքան վիրաւորուած ու իր հպարտութեան մէջ այնքան մրկած չէր որքան այս յօդուածով, որ կարծես թէ դիտմամբ կ'ուրանար Վահէի պէս մեծ տաղանդի մը գոյութիւնը Հայուն մէջ : Ի՞նչ կ'ընեն մեր «երիտասարդները» ա՞յնչափ զրաղեալ են որ պարապ ժամեր «չունին գեղարուեստով զրաղելու, թէ չէ զուարթութեան և հաճոյքի աւելի նուրբ ու ազնուագոյն միջոցներ գտած են» : Բայց եթէ անիկա բոլորովին հակառակ ներգործութիւն մ'ըրաւ իր վրայ, պատճառը ա՛յն էր որ ան վերջնականապէս վճիռը կուտար իր գաղափարին տատանող կէտերուն, իր վարանումներուն և իր ճամբորդութեան երկրորդ այլ առաջին նպատակը կը գծէր... :

Եւ հիմա որ—Վահէն քովը—Տիրան կը տեսնար իր դէմը ծառերու մէջ ապաստանող այդ դիւթական վիլլաին մասամբ

իր պաշտօնին արժանապատուութիւնը չըմբռնէր արժանապէս: Ուրեմն մանկավարժական դասախօսութեան մը կարեւոր մասերէն մին կը վերաբերի նոյն ինքն դաստիարակին պատրաստութեան, ա'յն մտքին որով նա պիտի ոգեւորուի, ա'յն յատկութիւններուն զորս ի հանդէս պիտի բերէ:

Դաստիարակութեան վսեմ գործով եւ ռանդեամբ ու յաջողութեամբ պարապելու համար, նախ պէտք է ըմբռնել այդ գործին արժանապատուութիւնը և ճիշտ ու բարձր գաղափար մը կազմել դաստիարակի պաշտօնին վրայ: Պէտք է ըմբռնել թէ դաստիարակի ասպարէզն ո՞րպիսի ներքին ուրախութիւններու աղբիւրներ կը սքողէ անոնց համար որք արժանապէս պատրաստուած են այդ գործին: Երեք գլխաւոր նկատողութիւններ, յաջ մեր, կը հաստատեն դաստիարակի պաշտօնին արժանապատուութիւնը:

Ամէն բանէ առաջ, դաստիարակին պաշտօնը Առաքելութիւն մ'է. ուրեմն ճշմարիտ դաստիարակն առաքեալ մ'է, անձնուէր ու անշահախնդիր առաքեալ մը, ուրիշներուն համար և ո'չ թէ իր անձին համար զըրկուած, հանրութեան օգուտը և ո'չ թէ իր սեփական օգուտը, շահը փնտռելու համար. վասն զի ընկերութիւնն է որ կ'զգայ դաստիարակին գործին բարի կամ յոռի արդիւնքը: Արդարև, ի՞նչ բան կրնայ աւելի շահագրգռել հանրային օգուտը քան մանկան դաստիարակութիւնը: Սովորական արուեստ մը, ու և է արհեստ մը, չունի այս որոշիչ հանգամանքը: Ու և է արուեստագէտ իրեն համար միայն կ'աշխատի, և ա'յն շահերուն համար զորս կ'ակնկալէ իր աշխատութենէն. եթէ յաջողի կամ ձախողի, ինքը միայն կ'օգտուի իր յաջողութենէն, կամ կը վնասուի իր անկարողութենէն ու անխորթութենէն: Սակայն դաստիարակին համար բոլորովին տարբեր է խնդիրը: Հընդհանրական ամենամեծ իմաստուններէն մէկուն խօսքը կ'արժէ հոս յիշել. «Թող ձեր կօշիկակարն անճարակ գործաւոր մ'ըլլայ եւ գէշ կօշիկներ չինէ ձեզ, կ'ըսէ Պղատոն, և կամ թող ինքզինքը իրեն վարպետ կօշիկար ծախէ առանց այնպէս ըլլալու, դուք

ատկէ մեծ վնաս մը չէք կրեր, բայց երբ ձեր գաւկին դաստիարակներն անուամբ միայն դաստիարակ են, չէ՞ք տեսներ որ անոնք դէպի կործանում պիտի առաջնորդեն ձեր ընտանիքը, զի անոնցմէ՝ միայն կախում ունի ձեր մխիթարութիւնն ու ձեր երջանկութիւնը»: Երբ դաստիարակին պաշտօնն այս աստիճան կարեւոր է հանրային օգտին համար, ո՞վ կրնայ չճանչնալ անոր արժանապատուութիւնը:

Եւ, ասկէ զատ, ո՞ր պաշտօն այնքան վստահութեան արժանի պաշտօն մ'է որքան դաստիարակինը: Ո՞րքան մեծ ու նուիրական շահեր կը յանձնուին դաստիարակին ձեռքը: Ընտանիքն ի՞նչ ունի սիրելագոյն քան իր գաւակները: Անոնց համար է որ հայրն օրն ի բուն իր քամակը կը ծռէ աշխատութեան բեռին տակ, անոնց համար է որ մայրն ուշադիր կը հսկէ տան պէտքերուն վրայ, եւ յաճախ դառն զըրկանքներ կը կրէ՝ աւելցնելու համար անոնց բարօրութիւնը մտաւոր ապագայի մը մէջ, որու վրայ վստահ անգամ չէ: Անոնց վրայ է որ մին և միւսը, իրենց մտքին բոլոր խորհուրդները, իրենց սրտին բոլոր զգացումները կը կեդրոնացնեն: Եւ այս թանկագին գրաւականը կը յանձնեն դաստիարակին ձեռքը: Վերջապէս երկրէն ու ընտանիքէն զատ, ընկերութիւնն ալ իր իրաւունքները կը պահանջէ. ընկերութիւնը պէտք ունի այնպիսի մարդերու որ իրենց բովանդակ կեանքին մէջ յարգեն ու գործադրեն այն սկզբունքները, կանոններն ու ճշմարտութիւնները, որոնց վրայ կը հանգչի մարդկային ընկերութիւնը: Ուստի դաստիարակներուն կը յանձնէ այսպիսի օգտակար անհատներ պատրաստելու հոգը. և անոնց ջանքերէն միայն կ'ակնկալէ այսքան չքեղ արդիւնքներ:

Քանի որ տղուն ապագան ուղղակի դաստիարակներուն ձեռքն է, անոնք իրենց տուած աւելի կամ պակաս խնամոց համաձայն, կրնան առաջն առնել, կամ տեղի տալ ա'յնպիսի աղետալի պատահարներու որք կրնան մանուկն անարժէք մարդ մ'ընել ապագային մէջ: Դաստիարակն ու իր տուած դաստիարակութիւնը կրնան վճռա-

կան ազդեցութիւն ունենալ տղուն ապագային վրայ, մանաւանդ բարոյականի ու կրօնի տեսակէտներով, Մատղաշ հասակէն, տղուն մէջ միտումները, ձգտումները կ'ուրուագծուին, ունակութիւնք կ'ստացուին, խիղճը կր լուսաւորուի, կամքը կ'ամրապնդի, հաւատքը կը կազմուի, և դաստիարակին օրինակը կ'ուզայ զօրացնել այս ամենը և այն վայրկեանէն մարդս կ'ընդունի այն անջնջելի դրոշմը որ անոր բարոյական կեանքը մատնանիչ պիտի ընէ ապա: Ուրեմն դաստիարակութեան գործին է'ն կարեւոր մասը կը կազմէ բարոյական դաստիարակութիւնը Մաքրել տղոց սիրտը, անոնց բարի ձգտումներուն զարգացման նպաստել, և բարւոյն ունակութիւնները ներշնչել անոնց ահա ա'յս պէտք է ըլլայ դաստիարակին գեղեցիկ ու ազնիւ գործը: Բայց ի՞նչպէս կրնայ այս վախճանին հասնիլ, եթէ ինքն իսկ իր ընթացքով ու բարքով օրինակի տիպար մը չէ: Ի՞նչպէս պիտի գտնէ իր սրտին խորը ա'յն օժեալ լեզուն, որ անխուսաբար առ ինքն կը ձգէ, ա'յն խանդավառ ու համոզիչ խօսքերն որք առաքինութիւն կը պատուիրեն, սիրելի և պաշտելի ընծայելով զայն: Երբ դաստիարակին օրինակն այսքան կ'ազդէ մանկան ճղճիմ միտքին ու սրտին վրայ, իր յուր ընթացքն ի՞նչ աղետաբեր ազդեցութիւն չի կրնար ունենալ անոր սրտին վրայ, եւ ապագային մէջ ալ անոր բռնելիք ընթացքին վրայ, «Սիրել մանկութիւնը և ինքզինքն յարգել» ահա' այս պէտք է ըլլայ, կարճ խօսքով, խտւալն այն մարդուն որ ի բնէ կոչուի կ'զգայ դաստիարակի վսեմ պաշտօնն ի գործ դնելու: Ուստի ո՛վ որ մանկանց ապագան իր ձեռքն ունի, անտարակոյս պարտի արժանապէս բմբռնել իր պաշտօնին արժանապատուութիւնը:

Մ.



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԱԿՆԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ.— Այս բառ Ակնայ Առաջնորդարանի տոմարներուն մէջ միայն գոյութիւն ունի: Տեղացին ընդհանրապէս նշանախօսութեան սովորութիւնք Ակնայ մէջ բարեփոխուած են շուրջ քառորդ դարէ ի վեր: Նախապէս, ծնողաց հաւանութեամբ, մանչ և աղջիկ օրօրոցէն կը նշանուէին: Կ'անցնէին տասնեակ տարիներ և երբ մանչը 17 տարեկան ու աղջիկը 13—14 տարեկան լինէին, ամուսնութիւնը կը կատարուէր մեծ և նոր խրախճանութիւններու մէջ,

Հին ժամանակներու մէջ երկու մեծ-աղաներու բարեկամութիւնը կամ հաճոյակատարութիւնն էր ամուսնութեանց միջնորդը: Մի' փնտռէք երբեք փոխադարձ սէր ու համակրանք աղջկան ու մանչուն միջեւ: Աղջիկ ու մանչ, իրենց տղայ հասակէն, միասին կը մեծնան միամիտ սրտով ու սիրով, անգիտակից նոյն իսկ իրենց ապագայ միութեան, անգիտակից մանաւանդ-ամուսնական կեանքին ու պարտաւորութեանց:

Ակնցին անզգայ ժողովուրդ մը չէ եղած երբեք. ունեցած է իր տխուր և ուրախ կեանքը, ժամանակ մը Պոլսոյ սեղանաւորական հրապարակին տէրը Ակնցիներն էին և առատօրէն կը շահէին ու կը շահագործէին միամիտները. և ապա իրենց ապառաժուտ քաղքին մէջ կը մտնէին շուայտութեան մէջ: Յորչափ աղջիկն ու մանչը նշանուած ֆային, աղջկան ծնողք պարտաւոր էին ամէն տօնական և նշանաւոր օր նուէրներ ղրկել, որոնք սուղի կը նուտէին յաճախ:

Մանչուն ծնողքն ալ փոխադարձաբար միշտ դրամական նուէրներ կը ղրկէր իր հարսնացուին: Այսպէս երբ տարիներէ վերջ ամուսնութիւնը տեղի ունենար, հարսը իր հօր տունէն ամուսնոյն տունը փոխադրուած ատեն, իրեն հետ կը տանէր բաւական պատկառելի զուգար մը:

Երկուստեք ծնողաց հաւանութեամբ,

երբ աղջիկ ու տղայ կը նշանուէին, մանչու ազգականները շնորհաւորութեան կ'երթաին աղջկան տունը, և չափազանց կը պատուասիրուէին : Բայց ի փոխարէն աղջկան կ'ընտրէին մէկ մէկ ոսկի՝ ըստ կարողութեան : Այս այցելութեան աղջիկսես կ'ըսեն Ակնայ մէջ և ընդհանրապէս գիշեր ատեն տեղի կ'ունենայ . եթէ միեւնոյն թաղին կամ գիւղին մէջ են խնամիրները :

Այցելուներուն առաջարկութեամբ, արիւնք մը և կաղամար գրիչ կը բերուին . իրենց մէջէն մէկը դրագիր կ'որոշուի և ահա՛ ամէն կողմէ դրամական նուէրներ արիւնքէն մէջ կը թափին : Գրագիրը մէն մի նուէր կ'արձանագրէ նոյնիւրիւն անուամբ և երբ կ'աւարտի, ներկաներուն մէջ կը կարդացուի ցուցակը, որ ընդհանրապէս երկու օրինակ կ'ըլլայ . մէկը աղջկան ծնողքին և միւսը մանչուն ծնողքին քով կը մնան Այս ցուցակին մէջ առաջին տեղը կը գրուէ փեսային տուած նուէրը, խօսք կ'աւարտի որ ընդհանրապէս 5—10 իւրանոց ոսկի մըն է . կամ ոսկի ժամացոյց մը, մատանի մը և կամ ուրիշ արժէքաւոր առարկայ մը :

Այս նուիրատուութիւնէն ետքը այցելու խնամիրները կը մեծարուին եաղլոյով կամ բախլալալոյով և եղանակին յատուկ մրգեղէններով :

Այս ժամանակամիջոցին մէջ ներելի չէ երբեք մանչուն առանձինն այցելել իր նշանածին . երբեմն միայն իր քրոջ ու ազգականուհիներուն ոմանց ընկերակցութեամբ կ'ընայ այցել և ոսկի նուէր տալ աղջկան :

Կը տեսնէ՞ք հակադրութիւնը . մինչ եւրոպական քաղաքակիրթ ազգերու մէջ աղջիկն է որ դրամոթիտով ինքզինքը կը ծախէ ու ամուսին կը գնէ, գաւառային ժողովրդեան մէջ մա՛նչն է որ ոսկի-նուէրով օտս սուղի կը գնէ իր ամուսինը :

Հիմա Ակնայ մէջ նախատւութիւնը, ըստ առաջնոյն, մանկալիսն հասակէն չի կատարուի, թէեւ բացառաբար կան ծնողքներ որ կ'ընտրեն իրենց զուակաց կամքին ու սրտին վրայ :

Ակնայ մէջ նշանախօսութիւնք չատ քիչ անգամ կ'եղծանին . և այս պարագային մէջ տուժողը միշտ նախաձեռնարկն է . այն

նուէրները զորս զրկած են երկու խնամիրները . նախաձեռնարկ-եղծանողը չի կրնար ետ պահանջել :

Վերոյիշեալ սովորութիւններ տակաւ աւանդութեան կարգ կ'անցնին : Ակնցին չունի հիմակ իր նախկին դրամական կարողութիւնն ու դիւրութիւնը . ստիպուած է այլևս չափաւորել իր ծախքն ու խրախճանքը : Հանգուցեալ Սրուանձաւանց Եպիսկոպոսի առաջնորդութեան օրով, արդէն Գաւառական Վարչութիւնն այլևայլ կանոնադրութեամբ և զանազան միջոցներով արգիլած էր այս շռայլ սովորութիւնները, բայց Ակնցին համակերպող ժողովուրդ չէ, նա դադարի կը շարունակէր իր սովորութիւնը . մինչեւ որ ժամանակին հարկը զգաստացուց լինքը :

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.—Կ'անցնին տարիներ և ձնոգը կը փափաքին ամուսնացնել իրենց զուակները, կը կանչին իրենց տաներէց քահանան և անոր միջոցաւ պաշտօնապէս կ'իմացնեն աղջկան տիրոջ՝ հարսնիքի օրը : Այդ օրերուն մէջ մանչուն և աղջկան կողմէն քանի մը ներկայացուցիչներ իրենց տան քահանաներուն հետ կը դիմեն յ'առաջնորդարան, կը վճարեն իրենցմէ պահանջուած նուէրն ու կ'ստանան հրամանագիրը : Առաջնորդարանը կամ կ'ըն, ժողովը ազգակցական եօթն-պոյսք միայն կը հաշուէ եւ իսկոյն կ'արտօնէ, առանց քննելու աղջկան և մանչուն տարիքն ու դարգացումը, բարոյական ու ֆիզիքական վիճակը : Այս խրատապահանջ ժողովականներու օրով սակայն տեղի ունեցած են ազգակցական արգելք ունեցող ամուսնութիւններ, որոնք վանքին քիչ մը աւելի դրամ վճարելով՝ յաջողած են արտօնութիւն ստանալ :

Ակնայ մէջ հարսանիքներ տեղի կ'ունենան Փետրուար, Մայիս եւ Օգոստոս ամիսներուն մէջ ընդհանրապէս Ամէն ժողովուրդունի իր հարսանեկան հանդէսն ու խրախճանքը : Ակնցին բնականաբար ունի իր յատկանշական սովորութիւնները զորս պիտի պատկերացնեմ :

Հարսանիքը Ակնայ մէջ չաբաթ երեկոյէն կ'սկսի եւ կը տւուէ երեք օր . այդ օր մանչուն տունէն ձեռք մը զգեստ կը զրկուի աղ-

ջկան տունը, հազուցածն է այն, զոր պիտի հագնի հարսնացուն ու այդ զգեստներով պիտի գայ իրենց տունը: Այս ձեռք մը զգեստը կը կազմեն ճերմակեղէնները, թաւշեայ անդրաւարտիքը կամ ռալվարը, ոսկեհուռ ենքարին կամ արդի Ֆիսսանը, մէջքի թանկագին ռալը, կիւնիք մուշտակը, պոյով (երկայն) մուշտակը՝ զոր անոր վրայէն կը հագնի, ոտնաման մը, եազմա մը՝ զոր գլխուն կը կապէ մազերը հաւաքելու եւ տաք պահելու համար եւ վերջապէս վերարկուն՝ պիւնիքը, Ֆերանգն՝ զոր կը գործածեն փողոցին մէջ օտարէն ու անծանօթին ինքզինքնին սքողելու համար: Ահնայ մէջ շատ մեծ անպարկեշտութիւն մըն է առանց ծածկոցի տունէն դուրս ելնել. տան մէջ ներքի չէ գլխարաց մնալ:

Յատուկ արարողութեամբ կ'օրհնուի այս ձեռք մը զգեստը, զոր ապա աղջկան կը հագցնեն իր ազգականները: Այս զգեստներուն վրայ կը ձգեն կարմիր քօղ մը՝ ոսկեթել բանուած, որոյ վրայ ալ դրուած է Առաքնորդարանէն յանձնուած փոքրիկ արծաթէ խաչ մը:

Հարսնացու աղջիկը կը հագնի իր ամուսնոյն տունէն զրկուած զգեստները՝ գլխուն վրայ կը ձգէ այն կարմիր ոսկեթել քօղը որ չորս կողմէն մինչեւ ոտները կ'երկարի, աջ ձեռքին վրայ ձգուած է ճերմակ թաւշեայ թաշկինակ մը՝ զոր բերնին առջեւ կը բռնէ մինչեւ առաջաստի գիշերը: Հագուցածը կամ հալար օրհնուելէ ետք խմբովին կ'երթան փեսային տունը, հոն ալ կ'օրհնուին փեսային զգեստները եւ այս արարողութեան տեղացիք կ'ըսեն քալո՛ւր հազցնել: Փեսան՝ անպիս երիտասարդ մը ընդհանրապէս՝ ներս կը մտնէ կիսազգեստ, տաբատ մը միայն հագած է եւ ուսին վրայ ձգած է իր մօր է՛ն պատուական մուշտակը. սովորական աղօթքներով եւ ձեւերով փեսան կը հագնի իր զգեստները, եւ ամէն կողմէ կը շնորհաւորուի իր փեսայութիւնը:

(Շար.)

Վ. Գ. ՍԱՐԸՅԱՆ



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ա Ր Մ Տ Ի Ք

Աւսիֆ (Céréales) կը կոչուին կարգ մը բոյսեր, որոնց հունները կը կազմեն սնունդ մը, կերակուր մը, կամ երբ աղանք զանոնք՝ ալիւր կը մատակարարեն: Céréales անունն յառաջ եկած է Cérès (Դեմետրէ) է որ հեթանոսութեան ժամանակ հունձքերու աստուածուհին էր, և մարդիկ կը կարծէին թէ ինքն էր որ ստեղծած էր այդ բոյսերը կամ գէթ սովբեցուցած էր մարդոց ճանչնալ զանոնք:

Գլխաւոր արմատիքներն են ցորեն, հաճար (տարեկան, չալսար), գարի, վարսակ, լազուտ (եգիպտացորեն), սև ցորեն և կորեկ:

Յ Ո Ր Ե Ն

Ցորենին բոյսը կը բաղկանայ սնամէջ ցողունէ մը. որ բացատ հանգոյցներ ունի, և կանգնած է թելուտ արմատներու բունի մը վրայ: Իր երկայնաձեւ տերեւները, մէն մի հանգոյցէ ծագում առնելով, կ'ընդգրկեն ցողունը, որոյ վերի ծայրը կը կազմուի հասկը, որ կը պարունակէ ցորենահատերը:

Շատ տեսակ ցորեն կայ. գլխաւորներն են աւեցան և գաւրեցան կոչուածները: Աւեցան ցորենները սովորաբար ճերմակ կ'ըլլան. աշնան կը սերմանուին և ամբողջ ձմեռը հողին մէջ կ'անցընեն. իսկ գարնեան ցորենները կարմիր կ'ըլլան, և հինգ կամ վեց ամիս միայն հողին մէջ կ'անցընեն: Հաստատուած իրողութիւն մ'է թէ միւսնոյն արտին մէջ, երկու այլատեսակ ցորեններու խառնուրդը գրեթէ միշտ՝ կուտայ աւելի մեծաքանակ բերք քան եթէ այդ տեսակներէն մին կամ միւսն առանձին մշակուէր: Այս խառնուրդին միջոցաւ, երկրագործք ձեռք կը բերեն գեղատեսիլ ցորեն մը, երբ փոյթ տանին ճերմակ ցորենը խառնելու կարմիրին հետ, կամ կարծր ցորենը կակուղին հետ: Բայց այս կերպով ձեռք բերուած ցորենը պէտք չէ իբրեւ սերմնացու գործածել, վասն զի գրեթէ միշտ այլասերում կայ:

ՀԱՃԱՐ

Հաճարը, որ կը կոչուի նաև *sarrasin*, կը նմանի ցորենին, իր հատիկն աւելի բարակ, աւելի երկարածեւ է, և ցորենէն աւելի տոգոյն։ Իսկ հասկն աւելի նրբածիգ աւելի նիհար է, և ոչ այնքան լեցուն։ Հաճարն ալ հաց չի ներու կը ծառայէ, բայց հաճարին հացը ցորենի հացին չափ սննդաբար չէ։ Ասոր փոխարէն, հաճարն աւելի գեղջկական է, ցուրտէն այնքան չի վախնար և աւելի աղքատ հողերով իսկ կը գոհանայ։ Հաճարին յարդը կը գործածուի դանաղան կիրառութեանց, մանաւանդ չուան շինելու։ Թէեւ մէկ քանի տեսակ հաճարներ կան, սակայն ձմրան հաճարն առհասարակ գործածուածն է։ Այս ցորենազդին ամբողջ մէկ տարուան մէջ կը հասունանայ, և այս պատճառաւ է որ դաւառացիք *sarrasin* կը կոչեն զան։

Երբեմն ցորեն ու հաճար խառն կը ցանուին։ Այս երկու բոյսերը կ'աճին առանց իրարու վնասելու, և որովհետեւ անոնցմէ մին (հաճարը) կրնայ տոկալ օգին դէշ պայմաններուն որք կը վնասեն միւսին (ցորենին), երկրագործը միջին հունձք մ'առնելու աւելի մեծ հաւանականութիւն կ'ունենայ։

ԳԱՐԻ

Գարին միւս սիզանման բոյսերէն կը զանազանուի իր խիստ երկար քիստերով։ Անցան գարին ընդհանրապէս կը սերմանուի աշնան, իսկ հոսարակ կամ մանրահատ գարին կը սերմանուի Մարտին, Գարիին հայր ցորենի հացէն ստորին է։ Բայց երբ խոշոր ալիւրի վիճակին մէջ արջառներու սննդեան գործածուի կովերուն կաթին քանակութիւնը կ'աւելցնէ, և եզները, խոզերը, հաւերը արագաբար կը սլարարտացնէ։ Գարին գլխաւոր սնունդն է ձիերուն, բայց գարեջուրի պատրաստութեան համար ևս ահագին քանակութեամբ գարի կ'սպառուի։

Ներհակ նախապաշարման մը հակառակ, գարին յարդը կրնայ օգտակար կերպով իբրեւ սնունդ տրուիլ անասուններուն, որովհետեւ շատ սննդաբար է, և հասկին քիս-

տերն ու էլ յոռի ազդեցութիւն չեն ըներ առողջութեան վրայ։ Գարին կ'ախորժի կակուղ, թեթեւ և քիչ մը խոնաւ հողերէ։ Ուժորարար կը ցանուի ձմրան վերջերը կամ գարնան սկիզբը։ Գարին մասնաւորապէս կը պահանջէ որ բոլորովին հասունալէ առաջ հնձուի։ Վասն զի հասուն հասկը շատ դիւրարեկ կը դառնայ և ցողունին հետ կցուած տեղէն կը փրթի։

ՎԱՐՍԱԿ

Վարսակն իր կերպարանքով կը տարբերի միւս արմախքերէն, իր հատիկներ կուռ հասկի մը մէջ շարուած չեն ցորենի կամ գարիի պէս։ Վարսակին հասկն ողկուցած է, Վարսակն ալ թէ՛ աշնան կը ցանուի եւ թէ՛ գարնան։ Ուժորարար փետրուարի կամ Մարտի մէջ կը ցանուի եւ Յուլիոսի մէջ կը քաղուի։ Հունգարական տեսակը շատ յարգի է։ Վարսակը սովորաբար սահմանուած է ձիերու սննդեան, որոնց կուտայ կորով եւ տոկունութիւն։ Կրնայ նաև հագ շինուիլ, բայց շատ միջակ յատկութեամբ։ Վարսակէն կը հանուի շատ ազնիւ ալիւր մը, *gruaud* կոչուած, որ մանր տղայոց սննդեան համար կը գործածուի։

ԼԱՂՈՒՄ

Լաղուտը (եգիպտացորեն) բնիկ Ամերիկեան բոյս մ'է։ Իր հասկն ու յարդը շատ աւելի խոշոր են քան միւս սիզարոյսերունը։ Լաղուտը կը սերմանուի Ապրիլին, սովորաբար իրարմէ 0.50 կամ 0.60 սանդիմէզը հետու կարգ կարգ, Ծաղկման ժամանակին անցնելէն վերջ, Լաղուտին կատարը կը ծայրատեն (*écimer*), աւելը հասկին մէջ կեդրոնացնելու համար, Բոլոր անասուններն ալ շատ կը սիրեն լաղուտին հատիկը։ սակայն հաւեղէնները սլարարտացնելու համար դեռաղանց սնունդ մ'է։ Վերջին ժամանակներս լաղուտին կարեւորութիւնը մեծապէս աւելցած է, որովհետեւ ալքօլ շինելու կը ծառայէ։

ՍԵՒ ՅՈՐԵՆ

ՍԵՒ ցորենը (*sarrasin*) թրթնջուկին

(oseille) հետ միեւնոյն ընտանիքէն է. թըլ-
թնջուկին պէս թուի հատիկներ ունի, յոյժ
անկիւնաւոր և կլոր խարխալով և մէն հողի
վրայ դիւրաւ կ'ածի, թէեւ նախամեծար կը
համարի կակուղ հողերը. շուտ կ'ածի և քիչ
խնամք կը պահանջէ: Այս ցորենազգիին
մշակութիւնն այսօր լքուած է, թերեւս
յանիւրախ, վասն զի իր հատիկը կը պարու-
նակէ գլխի չնոյնքան ազոգաւոր տարր
որքան ցորենը: Տաճիկ ցորենը Մայիսի
վերջէն մինչեւ յունիսի մէջտեղը կը սեր-
մանուի: Սառնամանիքէն չատ կը վախնայ:

Կ Ո Ր Ե Կ

Կորեկը (millet) կը մշակուի առ հասարակ
հարաւային երկիրներու մէջ: Այս բոյսն
ընդհանրապէս անհաւասար կերպով կը հա-
սունայ, եւ քանիցս հարկ կ'ըլլայ հնձել
զայն, ցորչափ հասկերն յաջորդաբար հա-
սունան: Այս դժուարութեան պատճառաւ,
մեծամեծ մշակութեանց առարկայ չի կրնար
ըլլալ, Կորեկը կը ծառայէ գլխաւորաբար
հաւազգիներու սննդեան: Կորեկէն կը հան-
ուի առհասարակ իւրիք կոչուած ալիւրը:

Շարունակելի

ՔԻՉ ՍԸ ԽՆԴՈՒՔ

Պատիկ Օննօն աշխարհագրութեան ա-
ռաջին դասը կուտայ.

- Ի՞նչ է աս կը հարցունէ իրեն ուսու-
ցիչը, աշխարհացոյց քարտէսին վրայ դնե-
լով մատը:

-- Ատիկա, միւսիւ, աղտոտ եղունգ մըն
է:

Այրբ. - Սիրելի՛ս, ալ հերի՛ք է որքան
որ սիրաբանեցիր ատ Գրիգորին հետ, կը
կարծես որ ուշադիր չե՞մ ես ձեր այդ կա-
տակերգութեան...

Կիճը. - Կատակերգութի՞ւն մի, ո՛վ կ'ը-
սէ կոր, ինձի լրջօրէն խոստացաւ որ զիս
առնէ՛ երբ այրի մնամ:

Պ. Ս*** իր առաջին ներկայացումը տը-
նուած է.

- Թատրո՞նն էիք, կը հարցնէ հեղինակը
բարեկամուհիի մը:

- Այո՛, առաջին արարուածին, սակայն՝
չափազանց յուզուած էի...

- Իրա՞ւ կ'ըսէք, տիկին. երկրորդի՞ն...

- Երկրորդ արարուածին ա՛լ գտած էի
կորսնցուցած մատանիս:

Գ*** օդաբանը երբ կարեւոր թերթի մը
համար կը խմբագրէր իր օդերեւութաբա-
նական գուշակութիւնները, կինը վրայ կը
հասնի և ուսին վրայէն կարդալով գրած-
ները:

- Բայց, կը գոչէ, գալ երեքշաբթի օր-
ուան համար «անձրեւ» նշանակե՛ր ես, մինչ-
դեռ այդ օրուան համար որոշած ենք մեր
դաշտային հացկերոյթը:

- Ա՛... Իրա՛ւ է, թշուառակա՛ն... մոռ-
ցեր էի:

Եւ առանց վարանելու, «անձրեւ»ը կ'աւրէ
և տեղը «գեղեցիկ օդ» կը նշանակէ:

Փաստարան մը բարեկամուհիի մը կ'ըսէր
անոր ամուսնութեան օրը.

- Սիրելի Տիկին, բոլոր շնորհաւորու-
թիւններս, միայն թէ պիտի խնդրէի որ ձեր
ամուսնայութեան դատը ուրիշ փաստաբանի
չը յանձնէիք:

Հանքային ջուրերու քաղաքի մը մէջ.

Ա. Հիւանդը. Երկնայի՛ն ջուրեր, մէջը
մտնողներուն կէսը իրենց յօդացաւերը հոն
կը թողուն կոր:

Բ. Հիւանդը. - Ատոր համար է ուրեմն որ
միացեալ կէսին ալ հիւանդութիւնը կը կրկ-
նապատկուի կոր:

Հուսանկարչատան մէջ.

- Ուշադրութի՛ւն... վայրկեանն է... մի՛
չարժիք ու սանկ նայեցէք:

Յաճախորդը անոր մատին ցոյց տուած
տեղը նայելով կը կարդայ. «Վճարումները
կանխիկ են»:

- Տիկին, այս սիրուն պէսլէքը ձե՛րն է:

- Այո՛.

- Բանի՞ տարու է արդեօք

- Երեք ամուսն:

- Ա՛հէնէ՞ն պզտիկն է:

Ս.

Արտատպ. — ԱՐՄ Ն ԼՈՒՍԻՆՍԱՆ

ԳՐԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրուշ

800 փոքրագույն երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ ընտանեկան ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Յրանստեան ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքի տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի արեւանի ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղչ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան:

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԱՍՃԵԱՆ

Գին 4 Ղրուշ

Լոյս տեսաւ Ն. Պերպլեան մահուր տպագրութեամբ, բաղ-վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փետրեմբեր 1900ի տպագրութեամբ, որ 20% էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ուշադրութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրալիք մեծախնայ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուսաւ Ղազարօժ եւ Ընկ.

Պատիւ ունիմք ծանուցանել թէ վստահաւորապէս փոխադրուած է Սասըգի խան թիւ 1 եւ 2: Եւրոպիոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէտքերով մը միշտ պատրաստ ունի մեծախնայ, ինչպէս նաեւ ժողովրդական համբաւ վայելող եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ համալից ջուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք հեղիւ ու փութով կը կատարուին, անմեղելի կերպիւ ածանց գներով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ.— Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները Ձրի հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուսն համար. իսկ 50 տող մէկ անգամուսն համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ՄԵՐ ՀԱՍՏԷՆ

«Հանրագիտակ»ի վերաբերեալ ամէն գրութիւն պէ՛տ է ուղղել Նեան Պերպլեան տպարանը, Էսփ զապթիյէ հասցէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն եւ Խմբագրութիւն «Հանրագիտակ»ի



ՌՕՍԻԱ. — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՅՐԴԵՅԸ, ԿԵԱՆԸ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ, ԱՐԿԱՅԸ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին	34,775,642 ֆրանք.
Երաշխաւորութեան գումար	121,765,333 >
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 >

Կեդրոնացեղի, Քարափին վրայ, Մախասան հին սեղր

Ընդհ. քննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՒՅԸ

Ընդհ. Դորձակալ
ԽԷՈՅՈՐ ՌԷՐՔԷՆ

Է Ք Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀՁՈՐ

ԿԵԱՆԸԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՏՐԱՆՔ



1898ին՝ ԷՔԻԹԱՊԼ իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15%, ՄԻԼԻՈՆ ֆրանք շահաբաժին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ ֆրանսական ՄԻԱՑԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկինը]:

Աւարտին մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷՔԻԹԱՊԼԻ չափ գործառնութիւն ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ պահեստի դրամ ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱՅՈՒՆ և աւելի ՇԱՀԱԻԷՏ ընծայել կեանքի ապահովագրութիւնը՝ որքան ԷՔԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՐՔ

ԼՈՆԴՈՆ

ԱՆԳԴԻՅ ՊԱՆԺՐԱ

Բարից և Կ. Պոլիս, Գրէտի Լիոնէ

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ԹՈՒՐԲՈՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒՍԺԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաճճէ Գաբու, Անաթոլիայի Խոն